«Արդշինբանկ» ԲԲԸ բաժնետերերի 2026 թվականի ապրիլի 29-ի տարեկան ընդհանուր ժողովը թիվ 2026-1-2 Լ որոշմամբ որոշել է՝

1. «Արդշինբանկ» ԲԲԸ 2025 թվականի ֆինանսական հաշվետվությունների համաձայն 137 070 957 000 (մեկ հարյուր երեսունյոթ միլիարդ յոթանասուն միլիոն ինը հարյուր հիսունյոթ հազար) ՀՀ դրամ գումարի «Արդշինբանկ» ԲԲԸ զուտ շահույթը (հարկերի նվազեցումից հետո) բաշխել հետևյալ կերպ՝

1) 6 853 547 850 (վեց միլիարդ ութ հարյուր հիսուներեք միլիոն հինգ հարյուր քառասունյոթ հազար ութ հարյուր հիսուն) ՀՀ դրամի չափով, որը կազմում է 137 070 957 000 (մեկ հարյուր երեսունյոթ միլիարդ յոթանասուն միլիոն ինը հարյուր հիսունյոթ հազար) ՀՀ դրամ զուտ շահույթի 5% (հինգ տոկոսը), կատարել պահուստային ֆոնդի (գլխավոր պահուստի) համալրում;

2) 96 701 250 000 (իննսունվեց միլիարդ յոթ հարյուր մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը բաշխել «Արդշինբանկ» ԲԲԸ հասարակ բաժնետոմսերի տիրապետող բաժնետերերին որպես շահութաբաժիններ՝ ըստ «Արդշինբանկ» ԲԲԸ կանոնադրական կապիտալում նրանց ունեցած մասնակցության համամասնությունների:

Սույն ենթակետով սահմանված շահութաբաժինները բաշխել մինչև 2026 թվականի հունիսի 01-ը ներառյալ՝ պայմանով, որ դա չի հանգեցնի «Արդշինբանկ» ԲԲԸ կողմից օրենսդրական և պայմանագրային պարտավորությունների խախտման:

Վճարումներն իրականացնել օրենսդրական և պայմանագրային պարտավորությունների խախտման բացակայության հանգամանքը «Արդշինբանկ» ԲԲԸ Ֆինանսական տնօրենի կողմից հաստատելուց հետո;

3) 2025 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով «Արդշինբանկ» ԲԲԸ տեղաբաշխված «Ա» դասի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ վճարել՝ հաշվարկված համաձայն «Արդշինբանկ» ԲԲԸ կանոնադրության 9.5. կետի:

Սույն ենթակետով սահմանված տարեկան շահութաբաժինների վճարումն իրականացնել 2026 թվականի հունիսի 30-ին;

4) մնացած գումարն ուղղել «Արդշինբանկ» ԲԲԸ «Նախորդ տարիների շահույթ/վնաս» հաշվեկշռային հաշվին:

2. Սույն որոշման 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված շահութաբաժինները վճարել 2026 թվականի ապրիլի 08-ի դրությամբ կազմված Բանկի բաժնետոմսերի սեփականատերերի ցուցակներում ընդգրկված բաժնետերերին՝ արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերեր հանդիսացող բաժնետերերի ցուցակը ճշգրտելով 2026 թվականի հունիսի 30-ի դրությամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: